# ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

**Հովսեփ Մաթևոսյան**
*Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի ասպիրանտ*

Հոդվածում անդրադարձ է կատարվում Մերձավոր Արևելքում տիրող իրավիճակին և հատկապես՝ Սիրիայում «Իսլամական պետություն» (ԴԱԻՇ) ահաբեկչական կազմակերպությանը: Խոսվում է նաև սիրիական ճգնաժամի ուղղակի ազդեցության մասին սիրահայության, հայկական մշակութային արժեքների և անուղղակի ազդեցության մասին Հայաստանի Հանրապետության վրա: Կարևորելով միջազգային հանրության ջանքերը Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատման գործում՝ հակիրճ ներկայացվում է նաև ՀՀ ԱԳՆ նախարար Էդվարդ Նալբանդյանի ելույթի բովանդակությունը Մադրիդում կայացած «Էթնիկ և կրոնական բռնության զոհերը Մերձավոր Արևելքում» խորագրով համաժողովին: Հոդվածում ներկայացվում է նաև Իրաքի հյուսիսում Քուրդիստանի ինքնավարության կառավարության կողմից անկախության հանրաքվեի անցկացման ու դրա հնարավոր հետևանքների մասին տարածաշրջանի պետությունների վրա:

**Հիմնաբառեր.** Մերձավոր Արևելք, Իսլամական պետություն (ԴԱԻՇ), ահաբեկչական կազմակերպություն, Սիրիա, Իրաք, Քուրդիստան

«Իսլամական պետություն» (ԻԳԻԼ կամ ԴԱԻՇ) ահաբեկչական կազմակերպության ազդեցության տարածումը միջազգային հանրության առջև ծառացած կարևոր մարտահրավերներից և սպառնալիքներից է: Որոշ հետազոտողների կարծիքով այն քվազի պետություն է, քանի որ իր հսկողության տակ ունի կոնկրետ տարածքներ, եկամտի բազմաթիվ աղբյուրներ, որոնք հիմնականում գոյանում են նավթամթերքի և մշակութային արժեք ներկայացնող իրերի ապօրինի վաճառքից, մարդկանց առևանգումից և փրկագին պահանջելուց և այլն: ԴԱԻՇ-ն ունի նաև սեփական դրամական

միավոր և օրենքներ՝ հիմնված շարիաթի նորմերի վրա[1]: ԻԳԻԼ-ի գործունեության հիմնական թատերաբեմն այսօր Սիրիայի և Իրաքի տարածքներն են: Չնայած միջազգային հանրության կողմից ձեռնարվող քայլերին՝ այն դեռևս շարունակում է իրական վտանգ ներկայացնել ինչպես Մերձավոր Արևելքի տարածաշրջանում, այնպես էլ հարակից երկրներում ու ամբողջ աշխարհում առհասարակ: ԻԳԻԼ-ի կազմում կան մոտավորապես 5-7 հազար քաղաքացիներ նախկին ԽՍՀՄ պետություններից, որոնցից պաշտոնապես մոտ 4000-ը՝ ՌԴ, 300-ը՝ Ղազախստանի, 386-ը՝ Տաջիկստանի, 104-ը՝ Ադրբեջանի քաղաքացիներ են, սակայն ոչ պաշտոնական տվյալներով ԻԳԻԼ-ի կազմում կան նաև Վրաստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Ուզբեկստանի և Թուրքմենստանի քաղաքացիներ[2]: Մարտնչելով ԻԳԻԼ-ի կազմում՝ նրանց մի մասը վերադառնում է հայրենիք. լիցքավորված լինելով կրոնաքաղաքական մոլեռանդությամբ, սկսում է վտանգ ներկայացնել ինչպես սեփական, այնպես էլ այլ պետությունների համար: Հետազոտողները կարծում են, որ ԻԳԻԼ-ի սպառնալիքը Հայաստանի համար աննշան է, քանի որ Հայաստանը քրիստոնյա երկիր է և այնտեղ չկա ներքին հենարան ԻԳԻԼ-ի համար: Ելնելով երկրի ազգային անվտանգության շահերից՝ ՀՀ-ն ձևավորում է իր պաշտպանական համակարգը՝ հիմնվելով նաև բազմավեկտոր ձևաչափի վրա: Սա նշանակում է, որ ՀՀ-ն, լինելով ՀԱՊԿ անդամ, սերտ համագործակցում է ինչպես ՆԱՏՕ-ի, այնպես էլ առանձին երկրների հետ, և այդ համագործակցությունը դիտարկվում է որպես երկրի անվտանգության կարևոր բաղադրիչ: Եթե ԻԳԻԼ-ի ուղղակի սպառնալիքը ՀՀ-ի համար նվազ է, ապա անուղղակի այն առնչվում է Սիրիայի և Իրաքի տարածքում ապրող հայերին և հայկական մշակութային արժեքներին: Ելույթ ունենալով 2017թ. մայիսի 24-ին Մադրիդում կայացած «Էթնիկ և կրոնական բռնության զոհերը Մերձավոր Արևելքում» խորագրով համաժողովին՝ ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնակատար Էդ. Նալբանդյանը մասնավորապես նշեց հետևյալը. «...Մերձավոր Արևելքի բազմազանության և հանդուրժողականության վերջին բեկորների պահպանությունը կարևոր դեր ունի տարածաշրջանային անվտանգության վերականգնման համար: Դա կարող է կանխել ապակայունացման վտանգի տարածումը ինչպես հարակից, այնպես էլ ավելի հեռու գտնվող տարածաշրջաններում, ինչի մասին են վկայում ահաբեկչական գործողությունները Եվրոպայում: Մերձավոր Արևելքի մարտադաշտերից ահաբեկիչների վերադարձը սպառնալիք է ոչ միայն իրենց բնակության երկրների համար, այլև կարող է դրդապատճառ դառնալ այլ տարածաշրջաններում հակամարտությունների սրման ու ճգնաժամային իրավիճակների առաջացման համար: ԴԱԻՇ-ի ոճով գլխատումներն

1 Տես Andrey Kurth Cronin, ISIS is not Terrorist Group; Why Counterterrorism won't stop the latest Jihadist Threat. Foreign Affairs, March/April 2015

2 Տես Угроза международного терроризма и религиозного экстремизма государствам-членам ОДКБ на центрально-азиатском и афганском направлении, аналитический доклад, аналитическая ассоциация ОДКБ, институт международных исследований МГИМО МИД России. Подредакцией: И. Н. Панарина, А. А. Казанцева, 50 с., Москва 2017г.

ու զարհուրելի այլ վայրագությունները արդեն այսօր չեն սահմանափակվում միայն Մերձավոր Արևելքի տարածաշրջանով: Եվս մեկ անգամ պետք է հստակ ընդգծվի, որ կրոնը որևէ առնչություն չունի բռնության հետ: Մենք գործ ունենք մարդկության դեմ հանցագործությունների հետ, որոնք իրականացվում են ԴԱԻՇ-ի և ահաբեկչական այլ խմբավորումների կողմից: Հենց այս ոգով է Հայաստանը վճռականորեն միացել այս չարիքն արմատախիլ անելուն ուղղված միջազգային ջանքերին: Մենք կարող ենք տարբեր տեսակետներ ունենալ դրա հիմքում ընկած պատճառների, զարգացումների և հանգուցալուծման ուղիների վերաբերյալ, սակայն մենք պետք է միասնական լինենք մարդասիրական հարցերում: Բռնությունը Մերձավոր Արևելքում չի շրջանցել սիրիահայությանը, որը բազմաթիվ զոհեր է ունեցել ահաբեկչական գործողությունների արդունքում: Ավիրվել են հայկական բնակավայրեր, եկեղեցիներ, դպրոցներ և մշակութային կառույցներ:

Հարյուր տարի առաջ Ցեղասպանությունից փրկված հայ փախստականները ապաստան գտան արաբական երկրներում: Այսօր հազարավոր հայեր Մերձավոր Արևելքի մյուս ժողովուրդների հետ նորից հարկադրված են թողնելու իրենց բնակության վայրերը: Միայն Սիրիայից Հայաստանն ընդունել է ավելի քան քսաներկու հազար փախստական՝ այդպիսով մեր երկիրը դարձնելով բնակչության թվի հարաբերակցությամբ սիրիացի փախստականներ ընդունած երրորդ պետությունը Եվրոպայում: Մենք նաև շարունակական մարդասիրական աջակցության միջոցով օգնության ձեռք ենք մեկնում այն մարդկանց, ովքեր դրա կարիքն ունեն Սիրիայում»[1]:

ԻԳԻԼ-ի գործողությունները Սիրիայում խիստ բացասական անդրադարձ ունեցան սիրիահայ համայնքի վրա: Այդ համատեքստում սիրիահայության անվտանգության, Սիրիայում հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման, սիրիահայությանը օժանդակության ցուցաբերման հարցերը սկսեցին առանցքային տեղ գբաղեցնել ՀՀ-ի համար: Ամեն դեպքում ԻԳԻԼ-ի դիրքերի թուլացումը և ահաբեկիչների մի մասի ոչնչացումը դեռ չի նշանակում խնդրի լուծում, քանի որ նրանց մի մասը, վերադառնալով իրենց երկրներ, կարող են ապակայունացնող գործոն հանդիսանալ: Հաշվի առնելով 2017թ. հունիսի 7-ի ահաբեկչական ակտերը Իրանի մայրաքաղաք Թեհրանում, որի պատասխանատվությունը իր վրա է վերցրել ԻԳԻԼ-ը[2]՝ Հայաստանի համապատասխան ուժային կառույցները, ամեն դեպքում, պետք է առավել զգոն լինեն: Այդ ահաբեկչական ակտերը խստորեն դատապարտվեցին պաշտոնական Երևանի կողմից[3]:

Մերձավոր Արևելքում իրադրությունը կարող է ավելի սրվել անկախ Քրդական պետության ստեղծման պարագայում: Իրաքի հյուսիսում՝ Քուրդիստանի ինքնավարության կառավարությունը հայտարարել է անկախության հանրաքվե անցկացնելու մտադրության մասին: Ըստ որոշման հեղի-

1 Տես http://mfa.am/hy/speeches/item/2017/05/24/min_middleeast/
2 Տես https://www.rbc.ua/rus/news/terakty-tegerane-podrobnosti-1496831583.html
3 Տես http://www.president.am/hy/condolence/item/2017/06/07/President-Serzh-Sargsyan-sent-a-condolence-letter-to-Islamic-Republic-of-Iran/

նակների, հանրաքվեն անցկացվելու է Էրբիլի, Դոհուկի և Սուլամանիայի շրջաններում և հարակից տարածքներում, որոնցում քրդական հոծ բնակչություն կա: Այդ մասին 2017թ. հունիսի 7-ին թվիթերում գրել էր Քրդական ինքնավարության ղեկավար Մասուդ Բարզանիի օգնական Հեմին Նավրամին: Նախատեսված է հանրաքվեն անցկացնել 2017թ. սեպտեմբերի 25-ին[1]: Պետք է նշել, որ Իրաքի Քուրդիստանը սահմանադրորեն ամրագրված ինքնավարության կարգավիճակ ունի և համարվում է Իրաքի մի մասը: Այս կապակցությամբ թուրքագետ Ռ.Սաֆրաստյանը նշել է հետևյալը. «Ականատես ենք աշխարհաքաղաքական առումով մի բարդ գործընթացի՝ Քրդական պետության առաջացմանը և, այս գործընթացը դեռևս մի քանի տարի կշարունակվի: Սեպտեմբերին պետք է Իրաքի հյուսիսում՝ Քրդստանի տարածքում, տեղի ունենա հանրաքվե: Իհարկե, դա կարող է նաև տեղի չունենալ, սակայն այստեղ կարևորն այն է, որ Քրդական պետության ստեղծման գործընթացը գնում է: Մոտ ապագայում Մերձավոր Արևելքում կստեղծվի նոր պետություն, իսկ այս գործընթացն առանց բախումների չի կարող լինել: Մերձավոր Արևելքում խաչվում են աշխարհի ուժային կենտրոնների շահերը, այս պայմաններում նոր պետության ի հայտ գալը բերում է շատ խնդիրներ՝ կապված հենց այդ շահերի բախման հետ: Ի վերջո Քրդական պետությունը չի լինելու փոքր, այն լինելու է հարուստ պետություն՝ ունենալով բնական պաշարներ, այդ թվում՝ էներգակիրներ: Այդ պետության առաջացումն իր հետ բերելու է Թուրքիայի համապատասխան գործողությունների, այսինքն՝ թույլ տալ, որ այդ գործընթացը շարունակվի, թե փորձել խոչընդոտել: Թուրքիայի որոշումից կախված կլինի այդ երկրի ապագան »[2]:

Իր հերթին Թուրքիայի արտգործնախարարությունը հայտարարություն տարածեց, որում «լուրջ սխալ» համարեց Քուրդիստանի անկախության հանրաքվե անցկացնելու որոշումը:«Մենք ընդգծում ենք, որ անկախության հանրաքվեն օգուտ չի տա Քուրդիստանի ռեգիոնալ կառավարությանը կամ Իրաքին: Տարածաշրջանում ծայրահեղ կարևոր զարգացումների ժամանակահատվածում դա կմեծացնի անկայունությունը և կառաջացնի բացասական հետևանքներ»,- նշված է Թուրքիայի արտգործնախարարության հայտարարությունում: Քուրդիստանի անկախության հարցով Իրաքի վարչապետ Հեյդեր ալ-Աբադին անցած ապրիլին ասել էր, որ հարգում է քրդերի իրավունքը՝ քվեարկելու անկախության համար, սակայն չի կարծում, թե «հիմա դրա ժամանակն է»: Բաղդադն այդ հարցին անդրադաձել է նաև Քուրդիստանում անկախության հանրաքվե անցկացնելու որոշման հրապարակումից հետո: «Անկախության հարցում մենք մերժում ենք Էրբիլի միակողմանի քայլը»,- նշված է Իրաքի կենտրոնական իշխանությունների հայտարարությունում[3]: Իրաքի հյուսիսում Քրդական պետության ստեղծու-

1 Տես http://tass.ru/mezhdunarodnaya-panorama/4321321
2 Տես https://armenpress.am/arm/news/894527/merdzavor-arevelqum-iradrutyuny-gnalov-vtangavor-e-darnum.html
3 Տես https://www.azatutyun.am/a/28538320.html

մը կարող է կլանել նաև Թուրքիայի, Իրանի, Սիրիայի քրդերին: Ռ. Սաֆրաստյանի կարծիքով Քրդական պետության ստեղծման համատեքստում Հայաստանի համար կարող են լինել և՛ վտանգներ, և՛ հնարավորություններ կապված սահմանների վերաձևումների հետ:

«Քրդական պետության առաջացումը նշանակում է սահմանների փոփոխություն, իսկ դա նշանակում է, որ նոր ստեղծվող իրավիճակում քննարկումների հիմք պետք է լինի Սևրի պայմանագիրը: Մենք պետք է պատրաստ լինենք, որովհետև այս գործընթացները նաև մեր պատմական տարածքներին են վերաբերում»,– նշել է Ռ. Սաֆրաստյանը[1]:

Այսպիսով, մոտ ժամանակներս Մերձավոր Արևելքում կարող է ստեղծվել բոլորովին նոր իրավիճակ, առաջանալ նոր պետություն, որը, հնարավոր է, կսրի իրավիճակը ինչպես տարածաշրջանի երկրներում, այնպես էլ պատճառ կհանդիսանա մեծ տերությունների շահերի բախման:

1 Տես http://www.panorama.am/am/news/2017/06/12/%D5%8D%D5%A1%D6%86%D6%80%D5%A1D5%B-D%D5%BF%D5%B5 %D5%A1%D5%B6/1792099

## УГРОЗЫ БЕЗОПАСНОСТИ НА БЛИЖНЕМ ВОСТОКЕ

**Овсеп Матевосян**
*Аспирант Санкт–Петербургского государственного университета*

В статье рассматривается ситуация на Ближнем Востоке и, в частности, деятельность террористической организации «Исламское государство» (ИГИЛ) в Сирии. Автор делает акцент на кризисную ситуацию в Сирии, в частности, какое она имела влияние на сирийских армян и на их культурное наследие, каково косвенное влияние кризиса на Республику Армения. Подчеркивая усилия международного сообщества по установлению мира на Ближнем Востоке, вкратце излагается содержание выступления министра иностранных дел Республики Армения Эдварда Налбандяна на конференции в Мадриде по теме «Жертвы этнического и религиозного насилия на Ближнем Востоке». В статье также представлено возможное ухудшение ситуации на Ближнем Востоке в случае проведения референдума о независимости в курдской автономии в северном Ираке.

**Ключевые слова:** Ближний Восток, Исламское государство (ИГИЛ), террористическая организация, Сирия, Ирак, Курдистан

## THREATS OF SECURITY IN THE MIDDLE EAST

**Hovsep Matevosyan**
*PhD student at St. Petersburg State University*

The article considers the situation in the Middle East and in particular the activities of the terrorist organization «Islamic State» (ISIS) in Syria. The author focuses on the crisis situation in Syria and what direct impact it had on the Syrian Armenians and on their cultural heritage, what is the indirect impact of the crisis on the Republic of Armenia. Stressing the efforts of the international community to establish peace in the Middle East, the author summarized speech of the Minister of Foreign Affairs of the Republic of Armenia Edward Nalbandyan at the conference about «Victims of ethnic and religious violence in the Middle East» in Madrid. The article also presented a possible deterioration of the situation in the Middle East in the case of a referendum on independence in the Kurdish autonomy in northern Iraq.

**Key words:** Middle East, Islamic state (ISIS), terrorist organization, Syria, Iraq, Kurdistan